

աներորդիք Որսզդի շորորդի (Թագ. յամս 578-90): Սորա նախորդին՝ անուշըտուն խորովու Թագաւորութեան ԽՍ տարւոյն (որ է 572), ազգովին կ'ապստամբի ի նմանէ վարդան մամիկոնեան որդի Վասակայ. կը սպարանն զՍուրէն մարզպան ի Գոսին, կ'երթան յունաց կը Հպատակին, եւ նոցա զօրօք կը դառնան Գունայ վերայ, կը կործանեն քաղաքը (անշուշտ պարիսպները) եւ պարսից զօրք կը հալածին: Այդ ժամանակ Հայք կը խռովին՝ տեսնելով որ ս. Գրիգոր «մերձ է քաղաքն», զոր պարսից ամբարանոց շինած էին, կը հրդեհի: Խորով յընթացս ութ ամսաց յղեց երկու զօրավարներ՝ նուանելու զՀայս. ապա ինքն անձամբ եկաւ, «զՎնդոյն կապեալ եղ ի գրուանդականի, եւ Վատամ պրծեալ զնաց փախտական»: Սրբա առաջին անգամ կը յիշուին Սեբէոսէ այս զի պուածիս մէջ, եւ այսպէս անորոյ. կ'երեւի՝ թէ իբր զօրավար յղուած էին ի Հայս, եւ հոն արքային զէմ գարձած: Վնդոյ դեռ կ'ապրի Որսզդի եւ Բ Խորովու ժամանակ, երբ արդէն մեռած էր Վարդան. եւ օգնականութեամբ Մուշեղի մամիկոնենոյ՝ յղելոյ ի կողմանէ յունաց կը պատերազմի Խորովու Վահրամ անուն պատամար նախարարին զէմ:

Կարելի պիտի լինէր այս Վարդանը եւ Վնդոյն նոյն Համարել թովմայի եւ Յովհաննու յիշածին Հետ, եւ ս. Գրիգորի կառուցումն վերաշինութիւն Հասկանալ, եթէ նոցա ժամանակակից արքայից արքայն Պերոզ չլինէր, Գիւտ նոցա ժամանակ եւ նորա աթոռոյն տեղափոխութիւնը նոցա զորձ չՀամարուէր: Եւ Վնդոյ յետ Վարդանոյ զեռ շապէր: Եւ արդէն թովմա եւ կրկին Վնդոյ կը յիշէ, որոց մին ծանօթն է, եւ միւսը Մուշեղի Հետ նախախիչեալ անցից մէջ, զորս ի Սեբէոսէ առած բառացի՝ կը պատմէ (Բ. Գ):

*
* *

Հոս կը կնքենք մեր խորհրդածութիւնքը, յիշեցնելով թէ յընթացս գրութեանս աւելորդ Համարեցանք յառաջ բերել միւս — բայց միայն ուր հարկ էր — մեր քննած խնդրոց մասին արդէն յիշուած կամ այլ Հայ եւ օտար բանասիրաց ոմանց աստ անդ յայտնած Համոզանները, որք կամ նպաստուոր էին միւսոց, կամ Հակառակ էին, զորս Հետաքրքիրք կրնան Համեմատել եւ կշռել երկազանչիւր կողման փաստից ոյժը. թէ եւ շատք միայն կարծիք յայտնած էին առանց փաստի. եւ

կամ Կանայք էին Հաշտեցնել երկու պատմիչներն այնպիսի կետից մէջ, յորս անկարելի էր այն՝ ըստ մեր եւ այլոց իսկ տեսութեան: Աւելի մանրամասն քննադատութիւն մի Եղիշեայ վերայ՝ որ դուրս էր մեր նպատակէն, այլոց եւ կամ ուրիշ ժամանակի կը թողունք:

Հացոռնի

ԱՌԵՏՏԻՐ ՊԱՂՏԱՍՍԱՐԵԱՆ

ՀԵԹԵՐՅՈՂ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԵԻ

(Շար. տես յէջ 375)

Ա Յ Ս ժամանակագրութեան պէ՛ս առանց կամ Քիշ արածով բաւական մաքուր գրուած Հատոր մ'այլ կայ ձեռագիր Աւետիքի, 140 էրես, զոր Ռակեփորիկ անուանեմք. վասն զի նման այսպէս կոչուած գրոց՝ Հաւաքում է այլեայլ մօտ կամ Հեռու նախնեաց բանից. սկիզբն է վերջն Գր. Տաթեւացոյ գրածներէն, իր վարպետին Յովհ. Ռոտանեցոյ գրած Եսայեայ մեկութիւնէն ըստ զուածք. Գարոզգրոց եւ Հարցմանց քանի մի կտորք է Յանկը. — «Պատմութիւն Արամայ եւ Եսայի եւ որդւոց նորա յազգէ յազգ», մինչև ի Սահակ եւ Մովսէս. — Պէպէս զիտելիք ծաղկաբաղք. — Պատճառք կազմութեան զրոց, ի մեծէն Վարդանայ. — Բնաբան Զարոզի ծննդեան Քրիստոսի «Ես ծաղիկ զաշտաց». — Հրցմ. «Վասն էր ամենայն ազգք երթան յերուսաղէմ. — Պատմութիւն Յովսեփայ եւ Ասանէթի, Ս. Գրոց անվարե կոչուածներուն մէջն. — Յանկ պատրիարքաց Հինգ Աթոռոց, մինչև ի կէս Զ դարու. — Անանիայ Շիրակացոյ թիւք տանց ամենայն Հին եւ նոր Ս. Գրոց, որոց կցեր է և մեր Շարականաց տունքն՝ 4656. բայց Շարականք տարբերին մէկմէկէ աւելի կամ պակաս բան

ունենալով — « Յաղագս վարուց և ելից
 « Սրբուհւոյն Մարիամու Մազգաղինեայ » .
 վրան տարբեր գրչով գրէ, « Այս ճառ թարգ-
 « մանեցեալ ի լաթինացոց, ձեռամբ Ներ-
 սիսի Լամբրոնացւոյ ի հայ բարբառ » . սա-
 կայն Լամբրոնացւոյ միւս շարագրութեանց
 չի նմանիր . ի ներքին գրէ Աւետիք՝ հատու-
 ըստ բոլոր հետեւեալ մասին համար և, « Ե-
 « ղ և սկիզբն գրգին ի թվին Հայոց ՌձԽԹ,
 « ն՛ամսեանն յույխի ժն, պատկեր օրն չու-
 « բեքշարդի, ի քաղաքին Տիգրանակերտ, որ
 « է Համիթ կամ Տիբարկէրի: Օգնեա Հոգի
 « Սուրբ Աստուած ճշմարիտ » : — Յաղագս
 « վարուց և ելից սրբուհւոյն Մարթայի », ևն . նոյնպէս վրան այլ գրուած ն . Լամբ-
 բրոնացւոյ թարգմանեցեալ : — Յովհ. Գառ-
 նեցւոյ իրատը . — իրատը Նուշարամն թա-
 գաւորի: Պատմութիւն Ս . Իւզոյն », Եղըր-
 գաւորի վանաց : — Հարցմունք ի ֆրանկաց
 փխրսոփայից : — Հրցմ. Յոքնաղի և Պատն .
 Մովսէսի Հայոց փերթողի և Դավթի փի-
 յոսոփայի Անյաղթի : — Յովհ. Եղնկաց-
 տայ Յղ . Երկնային շարժմանց . այս գրուա-
 ծոց օրինակին համար կ'իմացընէ ևս « Սո-
 « րա օրինակն գրած էր, թէ գրեցաւ գիրքս
 « Էսակոց Հարցմունք և Դավթի փխրսոփայի
 « և Մովսէսի փերթողի և Մամբրէի Հրցոց-
 « մունքն, և Վաղթանկայ իշխանին բանն,
 « ի թվին Հայոց ԶՆԸ (1839), ձեռամբ

« Գրիգորի Սուքիասանց . և մեք այժմս կըր-
 « կին գրեցաք այս տեղս զանուն գրողի օ .
 « բինակիս, որ յիշլի . Աստուած ողորմի
 « հոգուն » : — Պատմութիւն ֆարէզ մանկան
 և Վենայու դստերն Դոյֆի իշխանին, զոր
 « թարգմանեալ ի ֆրանսց լեզուէ ի հայ, ի
 « ձեռն Տէր Յովանէս Տէրգընեցոյ և իւր
 « որդոյն Խաչատուրին, ի քաղաքն Ֆրանս .
 « ձոց կոչեցեալն Մասշիխա » : Մանօթ եր-
 կար վիպասանութիւն ոտանաւոր : — « Պատ-
 մութիւն Անաուտ Տիմոյին, որ զՆտի աղ-
 ջիկն առեալ և փախեալ է » . այս այլ ո-
 տանաւոր գործ է Երեմիայ չէլէւոյ Գեօ-
 միւրեանս . — նոյնպէս ոտանաւոր Ներսիսի
 Մոկացւոյ Ողբք անձին . — Գր. Խլթթեց-
 տայ իրատը ժամատեղաց : Եւ այլ բնէ և
 փոքր բանքն Մոկացւոյ վերնագիրն է,
 « Ներսէս վարդապետի սասցեալ զՈղբս վանն
 « անձին և յորոց վերայ յարմարի: Այս
 « այն Ներսէսն է որ Մոկացի է, և զնաց
 « ի Տաթեւոյ յանապատն, եկաց չորս տա-
 « ըի, և անտի եկաւ զՂմայ անապատն հաս-
 « տատեաց, ի թվին Ռձ, Աստուած լուա-
 « տրէ զիւր հոգին: Ամէն . Թէ կամիս զու-
 « նսլ ալ ասա » . այսինքն՝ երգելով . Ներ-
 սէս ճարտար բերդող է, ոտանաւորն այլ եր-
 կար սողերով, ինչպէս, սկիզբն՝ Սողուննի
 խօսքով .

« Մանուկ մտավարժ էի և ոգոյ բարւոյ ղեկեցայ .
 Նոյն ոգով հոստատեաց զիս Տէր՝ մինչ իմաստըս հաստեցայ .
 Հազարն այն ուրախ եղէ, վայելուչ մտօք ծաղկեցայ », և այլն .

Այս հատորէն աւելի բարակ հատոր մի
 այլ (90 էրես) Աւետիքի քաղած և իր դի-
 տած ու տեսած տեղերու ստորագրութիւն
 է, զոր մէկ անուամբ Աշխարհագրոքիւն
 կոչմն . սկիզբն է . « Յաղագս Աշխարհագրոս
 « թեան, պատմութիւնք համաօտարար,
 « թարգմանեցեալ ի գրեանց Լաթինացոց ի
 « հայ բարբառ, ձեռամբ Պատրի Յակոբ վար-
 « դապետի, ի խնդրոց Աւետիք Ընթերցողի,
 « առ ի օգուտ սուսմաստիրաց մանկանց եւ
 « կեղեցւոյ՝ օգնեա Յիսուս » : Սկիզբն աւ-
 սուսմական աշխարհագրութիւն է, երկնա-

բանութեան, ապա քաղաքական . բայց տեղ
 տեղ ալ օտար կամ օտարաց երկար կամ
 կարճ բաներ խառնէ . ինչպէս, « Հայոց բու-
 « վանդակ գերեզն համարն է 36 դիր, և
 « սոցա համարին՝ 50015 » . այսինքն, իւ-
 բաքանչիւր գրի թուաբանական արժէքն կամ
 քանակութիւնն, զոր օրինակ, ա = 1 . ժ =
 10 . շ = 90 . բ = 5000 . բայց գումարին
 մէջ Ա 20 թիւ աւելի դրած է, փոխանակ
 50015 21 պէտք էր գրել 49995 : — Յի-
 շեալ Պատրի Յակոբն ծանօթ հայագետ՝
 Վիլլոզ մականուն փոանկ Յիսուսեան քա-

Հանայն է և — Ուրիշ աշխարհագրական
թարգմանութիւն մի այլ կայր վերնագրաւս .
« Աշխարհացոյցս թարգմանեալ է Լատինա-
« ցոց, ումենն Յունականիս Անկիւրացոյց,
« յաղագա բոլոր հողերէն տիեզերաց » . կա-
տարեալ չէ գրուածն, Համառոտաբար Եւ-
րոպոյոյ, Ափրիկէի և Ասիոյ ստորագրութիւն

« Եկալք Աղամայ սրէքք, արարածք ամէն միաբան ,

Օրհնեմք զարարելն Աստուած՝ որ ստեղծեաց զէակս ամենայն », և այլն :

վերջը ողբալով իր ազգին խեղճութիւնը՝ մը-
խիթարէ յուսով լաւագոյն բաղոյի « յազգէն
այն արեական », իբր 180 տող բան է,
գրուած ի ԶնՆ թուին Հայոց, որ է 1539—
40 :

Այս հատորին մէջ օրինակած է և « Գիրքն
« է վերայ բնութեան Հանրական և մաս-
« նական ումենն քահանայի Իշող անուն
« Յեսու մկինեալ, ազգաւ Սուրբանի, զոր
« մեք թարգմանեցաք ի հայ զիր և ի լե-
« զու » : Բայց այս հին վերնագիր է, որ-
պէս և թարգմանութիւնն . քանի մի թուղթ
բան է : — Յետ Աստեղաբաշխութեան՝ որ
շատ գիտնականի գրուած է, Ա. կ'օրինա-
կէ Վանանդացի Ղուկասու յԱմստերդամ
1699ին սուղբալ կշռոց և Չափոց գի-
տելիքը, Հանդերձ վաճառականութեան վրա-
յօք գրածովը, և վաճառականաց Հարկաւոր
թուարանական կանոնօք, և ասիական և
երոպական Թուրքիոյ քաղաքաց իջեմանօք,
գլխաւոր քաղաքներէն սկսեալ :

Այլեայլ խառնիխառն գրուած տեղեկու-
թեանց միջոց՝ 20 երես (67—87) զուտ
աստեղագրականք են, առանց կարգի կտոր
կտոր, մասն մի ուրիշներէ առած, և մասն
մի իր շրջագոյնութեամբ տեսածն : Որչափ
այլ անձն և կցխտոր են, կան շատ կարե-
ւոր գիտելիք տեղեաց, ի մասնաւորի մեր
ազգայնոց բնակեալ Ասիոյ աշխարհաց, և
քաղաքաց, և յասկապէս Փոքր Ասիոյ և
Կիլիկիոյ . Բայց ամենէն նշանաւորն է նոյն
ինքն Աւետիք իր ընկերէն Հետ ըրած և
գրած ստորագրութիւնն՝ Հապաչի, թէ և հա-
մառօտ, այլ ստղգ հիմակուան ծանօթու-
թեանց Համեմատ, սակից կրնան օգտուիլ

է, ամբողջ թարգմանութեան օրինակը գը-
տուին :

Յետ Լատինաց կու գայ Հայն . « Ոտա-
նաւոր ի կարապետ վարդապետէ ասացեալ՝
« Նոյի որդոց բաժին աշխարհաց վերայ », նախ
Քամայ, ապա Սիթայ և Յարեթի . 15
ոտնեաց է շարին, և սկսի :

և աշխարհագիրք . մանաւանդ Իտալացիք,
որոց այս ետքի տարինկուսմն այն կողմերն
ըրածն և կրածն՝ աշխարհածանօթ է : Աւե-
տիքն այդ տեղագրութիւնը կարճ ծանօթու-
թեամբք կու հրատարակեմք յօրագրիս, ի-
տալերէն թարգմանութիւնն այլ կ'ընծայեմք
Իտալացոց, Եւ յետ այսչափ ծանօթու-
թեանց՝ յայտնեմք մեր փափագն և յոյօք,
նոր և զետ անծանօթ գրուածոց այդպիսի
երկար աշխատող և պրպտող բանասիրի մի,
Աւետիքի Պաղտասարեան :

Շարայարեյի



ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՏԱԳԱՆՈՒԹԵԱՆ

(Շար- Խնս 1է2 353)

Գ. ԲԵՒԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱՄԻ

ԲԱՐՇԱՄՄԻՆ, Աստղիկ, Նանէա, և
զորոյքն Բելայ եւ Շամիրամայ կը ներկա-
յացրնեն այն ազգեցածիւնը, զոր սեմական
տարրն բերք է Հայաստանի վերայ : Կը մը-
նան արդ բնիկ հայկական ծագմամբ առ-
տուածք :

Հարկ է յիշատակել աստ նախ ևս առաջ
վանաստոր զիբը : Դարձեալ Ազգաթանգեղոս
է՛ որ տեղեկութիւն կու տայ մեզ նորոս պաշ-
տաման մազին, շատ կարեւոր ևս շայեկան
տեղեկութիւն՝ որ կը ցուցնէ մեզ թէ քնչ